Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

18044

891·99
4-30

# ԴԱՅԼԱՅԼԻԿ

ԳՐԵԱՑ
Բ. Յ. ՎԱՐԴՈՒԿԵԱՆՑ

ԴՐՈՒԱԳ Ա.

Թուականին Հայոց 4381
Տոմարական Թուականին Ազգիս ՌՃԼԸ.

ՆԻՒ ԵՈՐՔ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿ Յ. ԷԿԻՆԵԱՆ
(100 Centre St. New York.)
1890

91.99
Ա-30
003

891.99
Վ-30

# ԴԱՅԼԱՅԼԻԿ

ԳՐԵԱՑ
Բ. Ց. ՎԱՐԴՈՒԿԵԱՆՑ

97

ԴՐՈՒԱԳ Ա.

Թուականին Հայոց 4381

Տոմարական Թուականին Ազգիս ՌՃԼԸ.

ՆԻՒ ԵՈՐՔ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿ Ց. ԷԿԻՆԵԱՆ

(100 Centre St. New York.)

1890

37066-66

## —ԾԱՌԱՅԱԲԱՆ—

Ոչ եթէ մեծամտեալ խրոխտանօք կամիմ երեւիլ իբր քանասաեղծ կամ Աստուածարան ոմն, քա՛ւ լիցի, այլ քանզի եղեւ ինձ յաճախ պատահիլ նշանաւոր և աննչան ազգայնոց ոմանց որ լուսաւորութիւն հաստատէին զպղտորութիւն մտաց և զուրայութիւն ասելով եթէ «Բնութիւն գործէ և Բնութիւն արտադրէ զամենայն ինչ», փափաքելի եղեւ ինձ նախ փաստելով երգել ի լուր ամենեցուն զգոյութենէ Հօր հասարակաց, ի դրուագիս այսմիկ, և ապա երգել զանուն Նորա սուրբ ի յայլում դրուագի, խոնարհ մաղթանօք և փառաբանութեամբ. Թողեալ զարդիւնաւորութիւն սորա Արտադրողին ամենայն օրհնութեանց։ Բ. Յ. Վ.

50880-Ա.Հ.

# ԴԱՅԼԱՅԼԻԿ

«Ասաց եւ եղեն»

Ա.

Ո՞վ է Բնութիւն որ գործիցէ
Առանց մեծի Աստուծոյ.
Կամ ի՞նչ արեւ ներգործիցէ
Հողագընդի զանգուածոյ.

Զի՞նչ էր օգուտ և կամ արդիւնք
Ցընդհարմանէ տարերաց.
Դիպուածական չանդից դրընդիւնք
Յաւիտեան ի չուփս իրերաց.

Ո՛չ չինեցին հրաշալի լերինք
Դիպուածական մի քաղաք.
Ուրչ անդ ընդոստ ժեռք և քարինք
Եղեն ինքեանք մի հիւղակ.

Ոչ հող, ոչ ջաղ, ոչ ջուղ բերեն
Խոտի վիրջ մի տերեւ.
Ուրչ զուգութիւնք անասնօրէն
Կազմեն մի մարդ արդարեւ.

Ուր չիք խորհուրդ, չիք անդ արհեստ
Գեղանըկար չինուածոց.
Եւ ո՛չ շուշան վայելչազգեստ
Ոնկր ըզգեղս հիւսուածոց։

Առանց իմիք ճարտարողի
Ճարտարութիւն չեղանի.
Եւ գեղութիւն ոչ չողչոլի
Առանց գոլս գեղանի։

*

Ի՞նչ ծառ յերկինս ամբառնա գլուխ
Ցընդեալ յերկիր խոր արմատ,
Առ ամեն կոյս մընդեալ մուխ մուխ
Իւրս արմին համեմատ։

Ի՞նչ և որո՞վ գործեօք հիւսին
Տերեւք ծառոց և ծաղկանց.
Թէ չէին ձեռք որ յա՛յնս հասին.
Որ տան շաքա՛ր եղեգանց։

Թիթեռնիկին ի՛նչ հինի թև
Փրքմաքընքուշ և նըրբին,
Զորս տարածեալ թռանի թեթև,
Ի գեղս ծաղկանց ակըմբին։



Ի՞նչ կենդանիք ազգի ազգիք
Առնուն գիւրեանց կերպարանս.
Ո՞ւստ գան հունչք, չունչք, ո՞ւստ են
Ո՞ւստի բարբառք ի բերանս։ |հոգիք

Ո՞վ է որ դնէ գչարս ոսկերաց,
Ի չափս քանակս համեմատս.
Թէ գէմ թեւս և ձեռք ձեռաց,
Ի յար նրման հինգ հինգ մատս։

Ո՞վ զեղընգաց գիտաց ըզպէտս
Դընել ի ծայրս մատանց.
Դիտմա՞նք, եթէ դիպուածք յանգէտս,
Որ դնեն ապչին բան չըրթանց։

Տես սրպիսի՞ հիանալիք.—
Միսք ոսկերաց ծեփելիք.
Երակք արեան ընթանալիք
Անուն կենաց չափելիք։

Ջիւք նըրբաթելք կրծիկք և կաժք,
Ուժս տարերք առաձիգք.
Որովք կազմին կապին ժոյժք ժաժք,
Բեռնարարձիկք փառացիք։

Ծուծք ոսկերաց պահեայ ի մէջ,
Ի պէտս յօծել յոդուածոց։
Ցորչափ հոգի է մառ ուանչէջ,
Ցորչափ կենաց փայլի բոց։

Ըստամոքսին սին՝ սընընդոց
Ո՞ գիեր ուզկուր պատրաստէ։
Եւ ո՞վ սեռից և սերընդոց
Կենաց զապրուստս հաւաստէ։

Այա՛ ինձ ո՛վ ուսանողաց
Ճոռոմաբան վարժապետ։
Զաչաց ըզգունտս ո՞ր բիւրեղաց
Հան գործարան կամ վարպետ։

Ո՞ր հանճարեղ գիտաց չինել
Զեռք ըզփամփուշտս լըսելեաց։
Կամ գործարան կարաց հինել
Նուրբ մետաքսի հիւսելեաց։

Զեռեռներկեակ զատամանց շարս
Ո՞ դէմ առ դէմ արկ ի լինտս։
Որք իբր անբիծ փայլին գոհարս,
Իրերամածս սերտապինդս։



Բ.

Զո՛ր և ըզմին և կամիցիս,
Ա՛ռ կենդանեաց ի կարգէն,
Կամ ի բուսոց յորս խնամիցիս,
Ուի խաւարէն քեզ փըրկեն։

Մո՛ւտ անդրընդոց ի խորութիւն։
Տե՛ս ըզճրկունս կերպակերպս,
Ի բիւրս մլոնից տարածութիւն,
Ի խորչս նոցին և ի ծերպս։

Տե՛ս ըզհազարըս հազարաց։
Տես և ըզբիւրըս բիւրուց,
Գունդ գունդ սրացեալ մեծատարած։
Զարմք՝ գո՛գ՝սերեալք ի սառուց։

Մեծամարմին կէտն անճառնի,
Հաստահարուստ հասակաւ։
Որ ոչ ձեռօք ինչ ըմբռնի,
Ոչ ձրկնորսաց հրոսակաւ,

Ինքըն կազմած լեռնակուտակ։
Անձին լոկ գիտէ զչահ։
Եւ անդրընդոց ի խոր յատակ,
Հանգչի անհոգ և անահ։

Մերթ շատրվան ցայտուցանէ
Ցահեղ ընչաց փրչմանէ.
Դոզ երկնից սիւն կառուցանէ.
Հրեղք սարսին 'գոչմանէ։

Ցառնեն յերես ջրեղէն մեծ ծառք՝
Լայնածաւալ ովկիանուն.
Նաւորդք կիսով լեղապատառք.
Հրճուին 'ի անտառ անանուն։

Մերթ ընթանա պատառելով
Զանհուն ծովուն թանցրութիւն.
Եւ ի փորին համբարելով
Հզուզակաց ցա՛ն ցրութիւն։

Իւր գործարան ըստամոքսին,
Զրտէ գատէ գրզատէ
Հանէ գիւղին մեծածախսին
Հիւթ որ 'ցաւոց աղատէ։

Այս ինքնաշարժ մեծ գործարան,
Սիրայօժար ժողովէ
Զնիւթ կարեւոր կենսածորան
Զդեղն պիտանի ի ծովէ։



Այս ծրի՛ ուտէ ծրկանց ըզբիւրս.
Եւ կրչտանա. հեչտանա.
Հատեալ զնոցին կենաց աղբիւրս
Ոչ խրվճահար վրչտանա։—

Այլ և Իւրաքանչիւր պաշարք և կուրք.
Ըզնոյն գործեն մինչ ի մահ.
Զնոյն և նոցին կուրք ընդհանուրք.
Մինչեւ յետին կենսապահ։

ՍՀյսպէս, տպրոց բիւրքք բիւրուց
Ուտեն անհուն քանակաւ.
Զայս աւանդեն և գարք գարուց,
Տալ զկեանս բաղմաց ի սակաւ։

Այլ ո՞ւր են ծախք ծրկանց ծովուց,
Ո՞ւր են նոցին լսպաւմունք.—
Զրկամք յբղի անթիւ նաւուց
Հողջոյնսն առնուն ծովափունք։

Եւ այս ամէն աղբ աղբ ծրկանց
Իւրաքանչիւր անհատիկ
Արուեստողի միտ անանց
Է հրաշակերտ խորոտիկ։

Մէն մի ոսկերք նոցին ունին
Զիւրեանց յատուկ չափ և ձեւ
Նոյն թիւք նոյն չարք մէն մի ազգին.
Եւ մրաձեւ չարժեն թեւ։

* * *

Եվ ի վերին մասունս գընդին.
Ի հողեղենն ցամաք.
Ամենածին տես արգանդին
Զարդիւնս ի մակ անդ համակ։

Եւ յելանել 'ծովէ անտի,
Մի' ինչ պատեհ կորուսցես.
Ցորժամ բազում հաւադընդի
Զերկակենցաղըս տեսցես։

Որք թ'օդային են թըռուցիկք,
Այլ ի ծովէ սընանին.
Զաշս արձակեն սուր՝ հեռաձիգ,
Սրանան խլեն թըռանին։

Եւ քանզի կերք իւրեանց գիտեն
Զնոցին նպատակ որսական.
Միշտ ի ներքուստ ըզվերն դիտեն
Հըսկող աչօք կիւսական։



Եւ ըզգալուստ տեսեալ զնոցին,
Անդընդաթունդ սուզանին.
Մըղեալ զինքեանս ի վայր խըցին,
Մինչ ի յատակ հասանին։

Այլ ո՛ւստ յագուրդ գըտցէ երբէք
Թէ չ'արշաւեալ կացցէ դուլ,
Եւ դանդաղիոտ և յուսարեկ
Եթէ մնայցէ ձըկընկուլ։

Սրանա սուզի և նա ըզհետ
Նոցին պընդեալ սըրարշաւ.
Ի նպատակն ի դիմել կէտ,
Կրէ և ոչինչ ապաշաւ։

Թէ մին փախնու, միւսն ըմբռնի
Մեղաւորին ի ճիրան.
Մինչեւ ստամոքս ձըկամք խըռնի,
Լըցեալ մինչեւ ի բերան։

Սոքա ի ծով՝ ցամաք յածին,
Ազատ ազատ դեգերեալ.
Հազիւ ուստեք ինչ հալածին,
Երկիւղ ումեք ինչ կրեցեալ.

Այլ ոչ սոքա բաղմապատկին,
Եւ ոչ ձրկունք հատանին,
Թէպէտ ծնանին թէպէտ պըտկին,
Թէպէտ ի թուխս մրտանին։

Սոքա հաւուց թէև հանգոյն
Սրանան թեւօք թեթեւօք,
Այլ ի պընդիլ ձրկանց հոգւոյն,
«Սոքա հաւք են» չասէ ոք։

Ե՛րբ և կամին թեթեւ քան զօդ,
Ցերկինս ի վեր թըռանին,
Կամ ծանրանան և ջըրախոթ,
Մըղին ի ձկանց խըռանին։

Ի վեր ի վայր տուեալ յորդան,
Տան զփառս էին որ եղենն.
Իւրեանց գոյիւք քարոզ կարդան
ԶԱմենարուեստ Անեղէն։

Գ.

Եւ ել ի վեր.—Թէպէտ ինչպես.—
Ի վերին յարկ կամարին.
Ուր հըսկայից թուշնոց պէս պէս
Զարմք և գաւկունք գուպարին։



Եւ դիտեա՛ նախ զարծուի հրզոր,
Թեւաւորաց թագաւոր.
Որ սուր սլացմամբ հանապազօր,
Է տէր երկնից փառաւոր։

Որ ոչ քան զինքրն բարձրագահ
Տեսեալ 'Ն դհանուր յարարածս.
«Ես եմ ասէ որ ոգդեմ ահ.
Զիք հաւասար իմ փառացս»։

Նա հայեցեալ խրոխտ գագաթանց,
Ամենարհ զնոսա տեսանէ.
Ցո՛ և կամի, առանց քըրտանց
Ի մի վայրկեան հասանէ։

Զիք մրրակից յայլմէ ազգէ,
Զի դէմ նրմա եկեսցէ.
Հրզօրագոյն յիւրմէ բազկէ,
Զի զիւր սահման փակեսցէ։

Ինքն ի վերուստ իշխանաբար
Հայի թըռչնոց օդապար.
Եւ կրէ զանձնէն մեծ զսլաբար,
Շահանշահից եալ տիպար։

Զի՛նչ և որ են ներքո կապոյտ
Աստեղազարդ կամարի,
Ամենեքեան եղեն ի բուտ
Իւրո անձին համարի։

Հաւահաւաք այս փոթորիկ,
Ցերկնից ի դաշտ սաւառնի։
Միշտ կրշտապինդ ունի փորիկ։
Ունի երկար ապառնի։

Գիտէ դարուց պատմել ըզդարս,
Քանի փոխէ զիւր փետուրս։
Գիտէ զհամայն հաւուց դադարս,
Զիւրո անձին կերակուրս։

Են և բազում այլք 'սոցանէն,
Որոց ի թեւս են եղջիւրք։
Զիւրեամբք սոսկում և հոյն 'ցանեն։
Թուին ահեղք իւր'քանչիւրք։

Երկրորդ հրսկա սդոյն բազէ
Հուժկու մագիլ գիլ ի գիլ։
Ի սուր արշաւ դիմէ վազէ։
Սարսափ ազդէ յարագիլ։



Եւ մինչ կաքաւ զեղեռանէն
Երգէ քաւէ կաքաւէ,
Ինքն իսկ բըռնի ի բըռանէն,
Իբր ի վիճակ ի քուէ։—

Մերթ կռունկ վերուստ գա կըրկռաձայն։
Սաւառաքեր պանգըխտին։
Կըրկռա կըկուն։ կըրկնէ զնոյն ձայն,
Իբր արձագանգ երախտին։

Եւ ճրնկներ երկայնաձիգ,
Երկայնավիզ արագիլ,
Որ սուր աչացն հազիւ վազիւ,
Գիտէ թեւօքն երագիլ։

Որ ի բարձանց գիտէ զգեստն,
Եւ տեսանէ ի խոնարհ,
Ընդ խոտս ի հող շարժող ճրմին,
Որսա զորս այն անհընար։

Ուղղանրացեալն տարածեալ թեւ,
Զուզտանրմանն ճոճէ [illegible]
Ի հող ըզգլուխն օձաձեւ
Ցըզէ մըզէ խորարար։

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Էջմ. Библиотека
Ս. Հայ. Հ. Մասեաց
Ս. ՍՈՒՍՆԻԿՅԱՆԻ ՍՈՒ

37066-66

Մի՛թէ լուա՞ր զդառաստանայ
Լրծակցութեանց արագլաց.
Ո՞րպէս զուգին ընդ ամուսնայ,
Հրսկեն ճոռոյ բունկալաց.

Որ ժուժկալու կենակցութեամբ,
Միակնութեան օրինօք,
Սրու և էգ բնակակցութեամբ,
Կեան ընդ կապոյտ խորանօք.

Որպէս լուա ականատես
Գիտոն ծանօթ ումենիէ.
Որ ինք ներկա էր ի հանդէս,
Յեղելութեան հիմանէ.

«Այր ոք գեղջուկ առ մի հաւկիթ,
Ել արագլին ի բունակ.
Փոխեաց զհաւկիթն, էջ նենգամիտ.—
Էանց մի կարճ ժամանակ.

«Արուն նախ հաս անդր արագիլ,
Հայէր, գրէր, գրլրէր,
Զեռաս այլ ինչ, բայց անարգիլ
Հէքն ի յիդէն.—դալարէր.



«Եկաս և էգն. էջ անդր ի բոյն.—
Տրնակն անխառով, խրոովէր.—
Վրքին կաքին ընդ այն ընդ նոյն.
Ապա թռանին կարեվէր.

«Եւ յետ դուն ինչ անցանելը
Ժամանակի մի միջոց,
Կոչեն ժողով մի քննելը.
Խրատին ընկերք հոծ ընդ հոծ.

«Եւ յետ երկար վարիուռելը
Ճոճմամբ ճիտից վեր ի վայր,
Հարո՛ւն լդին խոտորելը.
Հարո՛ւն տրտանցն ի սուր սայր.

«Անկաս. Լրքին բոյնն ամայի,
Թրռեան ընկեր ընդ ընկեր.
Նրչան զոգցես ամիթայի
Եթին. ոչ եւս ոք բնակէր.»

Ո՛ւր անիմաստ անբանաստան,
Ուր կաք և վէճ տրնաւոր.—
Ո՞ր արագիլ, ուր դատաստան.
Կամ զօնսօրդս բանաւոր.—

Դիտեա՛ ըզկռունկս և ըզսոսա ։
Ի լոյս գայցեն այլ զարմանք ։
Զի 'սոցանէ ո՞ ոք յուսա
Զինուորական կարգ մարզանք ։

Առաջնակարգ ու ստորակարգ ,
Թուաւորեալ բաժանաց ,
Հրմուտք , իբրեւ ռազմագէտ արք ,
Առչից մառչից նրչանաց ։

Ի շար ի շար շարժին շրջեղ ,
Շողշողընթաց շնորհաշուք ։
Արուեստողին առնեագեղ ,
Գոգցես զինուորք օդաշուք ։

Բայց ի հաուց , չեն հաւակերք
Հաւահաւածք բազմազանք ։
Այլ առաւել սիրո ընկերք ։
Իրերասէրք սիրացանք ։

Ընթանրապէս անպատերազմ ,
Խաղաղասէր ժողովուրդք ։
Թէպէտ ունին կարգ , կանոն , կազմ ,
Դատաստանի խիզ խորհուրդք ։



Գիտեն գընալ կարգ ըստ կարգի ,
Զինուորական կըրթութեամբ ։
Եւ կարապետք իւրեանց յարգի ,
Տարուբերէն ղորդութեամբ ։

Նահապետեան յաւէտ դրութեան
Զնըմանութիւնըն բերեն ։
Որ երկնային Արդարութեան
Աւին Հօրէն Հըզօրէն ։

Տե՛ս զաչս ի միւս կոյս դարձուցեալ ,
Ըզծիծեռնիկ սրաքընթաց ։
Ծաւայութիւն իւր մատուցեալ ,
Մաքրէ զմարախն ի յանդեաց ։

Մարախն ահեղ յանկարծածին ,
Անիծաբեր փութահաս ։
Որ տա սոսկում երկրագործին ,
Անթիւ ամամբ պատուհաս ։

Ոյր ծիծեռնիկ գա հասանէ ,
Սրացեալ ի ձայնըս ճրչոց ։
Ամրոց հանգոյն երբ տեսանէ ։
Զընջել բառնալ ի միջոց ։

* *

Խոնարհագոյն էջ ի սահմանս,
Ի գրատիկոնս օգտակինս։
Տե՛ս ըղհաւուց զազգս զանազանս,
Զանտառայինս խրատայինս։

Այլ նախ գրտիր զադամային,
Զանուանակոչ բառարան,
Ու գյորջորջմունսըն գիմային,
Ուսիր յուսման ճեմարան։

Եւ ապա մուտ ի հոյակապ
Շէնս մեծամեծ քաղաքաց։
Ի թանգարանս պալատաչափ։
Ուր գտա՛ն քառից ի ծագաց։

Ուր են թռչնոց երեսփոխանք։
Իւրեանց ազգաց առկայող։
Մէն մի իւրում գաւառ նահանգ,
Դաշտ կամ անտառ ներկայող։

Եւ տես քանի՛ մեծ է ձեռնարկ
Ի յականէ յանուանէ
Զայնս ճանաչել ի մի ակնարկ,
Զոյս յանկից էն հանէ։



Եւ մէն միւմ ազգի յատուկ
Ցա գոյն և ձեւ, չափ հասակ։
Որ ըղձուոց պըտկէ զպըտուկ
Զմանրակերկիտ բիւր տեսակ։—

Երբ ի սրբահս հաւաքածոց
Ազգ ազգ թռչնոց մրտանեա,
Զքեզ ի գեղոց յարուեստանոց,
Ուի ծաղկաստանս գրտանես։

Ներկարչութեան նրբին ճաշակ
Գա անդր ի տես ի հանդէս։
Երանգ երանգ գոյնք անուշակ
Ըստուերաւորք, թէ դէտես։

Մէն մի փոքրիկ տարբերութեամբ
Զանազանին գաղարարք։
Ցաւիտենիցն համբերութեամբ
Ուրուագրծիչ են համբարք

Ցաղթահարի արհեստաւոր
Ի գնահատել գայնոսիկ,
ՌԱՐՀԵՍՏՈՂԻՆ Նրպատաւոր
Ունի խօսիկ աւասիկ։

* * *

Եւ ո՛վ հրաշիցըս մեծութեան
Գործողին. ո՛չ դադարէ.
Ձոխ ճոխութիւն Աստուածութեան
Սոքօք զերկիր զարդարէ։

Զամայութիւն ամենուն դաշտաց,
Երկնից, օդոց, անտառաց,
Ձորոց խորոց, լերանց խրշտաց,
Լընուն սոքա խանդ առած։

Եւ երգեցիկ հանեն գեղգեղ,
Հընչեն մընչեն մրմընչեն.
Ի ձայնս նուագաց ամենագեղ,
Սուլեն, ճրչեն, ճրռընչեն։

Անդ քաղցրաձայն երաժըշտէ
Երգիչ թռչնիկ քանարեա.
Ի հեշտութիւն շեշտէ քրշտէ.
Զայնէ ձայնիւ քընարեա։

* * *

Ի միւս տխակրն սիրախանձ
Թառեալ վերա վարդենւոյ.
Երգէ զվարդէն գիւրըն նախանձ
Ուանդութ բազդին անդ զանւոյ։



Սոխակն ի ձայն վարդ 'Հոտ ուի դոյն,
Առաջնակարդ ցանկալիք.
Նախապատիւ և քաղցրագոյն
Այլ և բազդին խաղալիք։

Զի բա՛զդն է ը տա՛, կամ զբրկէ.
Ինքըն ճըմռէ՛ն կամ խնամէն.
Եւ սոխակ զա՛յս է որ երգէ
Ազդողագոյն քան զամէն։

Երաժըշտաց սա դասատու,
Երգչաց խանդից արծարծող.
Յուսահատից սա յուսատու,
Ցաւըն ցընծման վերածող։

Քանզի ասէ փորձառաբար.
«Ուր անձկացող հոգի կա,
Ուր ցանկացող ու սիրահար,
Անդ է 'ւ սիրոյն առարկա։

«Որ համբերէն ասէ խպտա,
Նա և կեցցէ երջանիկ,
Տացին նրմա կեանք բարեփառ,
Զոր վայելեն արժանիք։

«Համբերութեամբ ասէ հասի
Վարդին բացման դեռիբթիթ.
Ցարատեւող աչօ՛ք տեսի՝
Աչօ՛ք անքուն անքրթիթ։

«Բաղում ա՛յն էր, զի նընջեցի,
Եւ ըզվայրկեանն կորուսի.
Եւ ողբաձայն տրրտընջեցի,
Բաղդին բողոք յարուցի։»

Ա՛կն ի ճընճղուկս ա՛րկ այգերգակ,
Զա՛շ զարշալո՛յս զողջունող.
Մինչ չեւ եկեալ պերճ արեգակ,
Ըզխըրթնութիւնըն վանող։

Որ ի վերա խըմբեալ ծառոց,
Ցերդ ներդաշնակ ճըռուողէն.
Գոհաբանեալ 'սրրտից խորոց,
Զընդդէմ մրթոյն կըռուողէն։

Ճըլվըլալով ծառոց վերուստ,
Գովեն ըզմնամն անթերին.
Եւ աւետեն ըզմեծ գալուստ,
Աստուածայնո լաստերին։



Որ ըզգեղջուկ, պարզ չինական,
Զարթուցանեն բարեպաշտ.
Մատուցանել զիւր բանական
Զոհ, պատարագ տիրահաշտ։

Ասլ՝ ի խուհուրդ միահաւան,
Թռանին անտի խըմբովին.
Ի գիւտ ալկաց աներկեւան,
Առատ ձեռին ամբաւին։

Տե՛ս ըզտատրակըն զուգասէր,
Եւ զաղաւնին միամիտ,
Անպատերազմ և անվըսեր,
Փաղցրաբարբ յարաժամիտ։

Սպիտակերամ, լուսափետուր,
Լուսաշողշող թըրթըռմամբ.
Իւրաքանչիւրք աստուածատուր
Հարեալ սիրտ գըրգըռմամբ։

Սառամանեաց գա կարապետ,
Զայն տա ագռաւ կըրկըռա.
Ծառ անտերեւ սիրեալ յաւէտ,
Թառի նըմին ի վերա։

Զարթուցանէ ըզմարդկութիւն,
Ընդդէմ ցերտոյն ձմերան.
Որ և բազմաց ետ փերկութիւն,
Եւ ի ցերաէն չջմեռան։

Մերթ մատուցեալ բուն բօթաբեր
Հզօրիս խռովէ զերկաթեա.
Որ սարսափ զքուն թօթափէր
Ցաչաց Մէջդին Բիւզանդեա։

Սադ սիգավիզ, ըսպառնական
Ճիտ ճօճելով բանա թեւ,
Մըղեալ ըզկուրծ իւր առնական,
Սղդէ երկիւղ կարճատեւ։

Կուրծ տա ալեաց ըսպառնալեաց,
Կամամամօճըն բաղիկ.
Պաղիկ պաղիկ ընթանալեաց,
Հարեալ ըզկից խորտակիկ։

Կախեալ զիպիկ, զինչ խոպոպիկ,
Գա հարուցեալ, հընդկահաւ
Ինքնահաւան ճօճէ ծոպիկ,
Գոսոզութեան աղագաւ։



Քրտին փետուրք ցըցեալ վեր վեր,
Ողջամբ անձամբ ուռուցիկ,
Շարժէ զիպիկ հանէ կերկեր.
Նազի զիւրեւ տարածիկ։

Անհամեմատ հըպարտութեան
Ցոյց զինքենէն տա սա հաւ.
Ի ծաղրական իսկ պարտութեան,
Ղազիութիւն յուսա հաւ։

Եւ զուարճանան Ամերիկեանք,
Սըմա «թըրքի» կոչելով.
Որ յայլոց խըլելին կեանք,
Գընա բոհմուռնս փըչելով։

Սիրամարգին տես պերճասլաշ,
Խայտաբըղէտ, երփներանգ.
Եւ աքաղաղ գիշերաղաշ,
Ցիւր կանանոցն պատկառանք։

Որ կանայք քան զամենայն
Հաւուց սեռից օգտաւէտ,
Ծառայութիւն առնեն մարդկան,
Ածեալ հաւկիթ կենսաւէտ։

Ու 'Նտելագոյն քան զամեն հաւ
Ամենայնիւ անձնուէր։
Մեծաւ իւրեանց գան քանակաւ,
Ի մեռանել յօգուտ մեր։

Դ.

Բազման մեղուք, ամասարեն,
Վազել ի դաշտ ծաղկազարդ։
Բերել մեզ մեղր անոյշ պարէն,
Ծրծեալ զծաղկունս և ըզվարդ։

Ճանճ ի ճենճից ճարպից ճեպէ,
Ի նեխութեան ամարան։
Ըզթիւնաւոր միջատս թափէ,
Որս արարեալ յիւր բերան։

Եւ բազմաբիւր մրժղուկք յօդոյն,
Գան գոյանան յանկարծուստ։
Ըզգարշութեանց մաքրել ըզթոյն։
Առեալ պաշտօն ի վերուստ։

Թէպետ սոքա բարի գործոց
Զունին առ մարդ նըպատակ,
Այլ Արարչին է այն ի ծոց
Ի խորհրդոց խոր յաստակ։



Ինքեանք ինքեանց ըզհետ գընան
Ախորժակաց ի յագուրդ։
Ի հեշտութիւնսըն ընթանան,
Ո՛չ գիտելով յո՛ր խորհուրդ։

Մեր տեսութեանց որչափ զօրէն
Կարք հասանել նրրբութեան,
Հաւանին միտք ըզհըզօրէն։
Ամին խորհուրդք սրրբութեան։

ՆԱԽԱԽՆԱՄՈՂ ՄԵԾ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ,
Արկ ի համար զամենայն,
Ըզվէտս մարդկան, զառողջութիւն,
Զոյս մեք վատնեմք ընդունայն։

Ե.

Էշն ու ջորին քուռակն իշո։
Եւ ձին պարկիրք բեռնակիրք։
Նաև գոմէշն ընդ գոմիշո։
Եզն ընդ եզին համակիրք։

Կըրեն զմարդիկ, զիւրեանց բեռինս,
Ցօժար կամօք հըպատակս։
Երթեւեկեն, գրծեն զերինս,
Ըզդաշտս, ըզջուրս ըզվրտակս։

Ուղտից երամք և փիղք հըսկայք,
Ըզնոյն առնեն հանապազ.
Պաշտօն առ մարդ ցերեկ և ցայդ,
Յանապատին ի յաւաղ։

* * *

Կաթնատուք, կով այծ և ոչխար,
Մածուն՝ պանիր տան՝ կարակ,
Ուզմիսս իւրեանց, որովք աշխարհ
Ունենա բոյծ և ճարակ։

Ի սոյանէն հանապազորդ,
Միլիոնք երկուք հատանին.
Թողեալ զընկերս աւուրց յաջորդ,
Ի սպանդարանս տատանին։

Ոյց կերակրոց ազգի ազգեաց
Բուրմունք, ի տանց Թորգոմա.—
Ցօրկ յորմէ մեր լոյս ծագեաց.—
Մըրձին ընդ բոյրս Եդեմա։

Որ ի բարի կենդանութեան
Ցառնեն Հայոց պերճ ազանց,
Ցեղբայրական ընտանութեան,
Քան ըզբնաւից գերազանց։



Զ.

Մո՛ւտ ի հասկաց ալեծածան
Ի ծովածուփ արտորայս.
Ուր հին սերմունք սերմանեցան,
Այս օր խըմբին նորք յորայս։

Բըրինձ, հաճար, մըսրացորեան.
Ոսպ ու բակլա և սիսեռն,
Շաքարեղեգ, գարի ցորեան,
Ցապահովել ըզճըմեռն։

Է.

Ցայգիս որթոց խաղողաբեր
Թըփոց բոց բոց փայլելոց.
Ուր ողից կոյզք մէն մի մեղեր,
Զըգեն զընթացս քայլելոց։

* * *

Ի ծառաստանս մըրգեղինաց,
Բոյլ անդ ի բոյլ ճօճելոց,
Ընդ որ բերկրեալ, գեղգեղանաց
Գան ձայնք և սոյլք ճրչելոց։

Տանձ, դեղձ, թամոն, խընձոր, սալոր,
Կարմիր կերաս և ծիրան.
Նուռն ու նարինջ գըլոր բոլոր,
Կախեալ ճօճան երերան։

Թուզ, սերկեւիլ, արմաւ և նոյշ,
Ընկոյզ, կաղին, ձիթապտուղ,
Լեմոն և այլ թրթռուն ոստոյշ,
Միրգք պընդացեալ կամ կակուղ։

* * *

Ածուք բերեն բանջարեղէն
Բազմատեսակ ուտելիք։
Ցոյց պարտիզպանք որ դան քաղեն,
Գիտեն ո՛րք են զատելիք։

Բազուկ, տակ, բողք, շողգամ, կաղամբ,
Ասպաննախ, սոխ և սխտոր։
Հազար, քարսոն և երկնաջամբ
Թրթռում կակուղ մեծհատոր։

Գետնատրընճոր և գոտաղէս,
Աւսպուր, տաքտեղ, պատրնճան։
Խաշխաշ հատեղ և բազադէս,
Բերք մըշակին ժըրաջան։

Սամիդ, սուսամ և անանուխ,
Եւ անիսոն և չամանն։
Ոմանք ցանին հանին կանուխ,
Ոմանք յետո դան ժամանն։



Վարունգ և սեխ և՛ ձմերուկ
Բազպրատծորան մեղրորակ,
Համեղ, մըսեղ, կարմիր, գիրուկ,
Լըցեալ ի պաղ օշարակ։

* * *

Արդ իմաստուն թէ ես, ճոտի՛ր
Այսչափ բարիք աւասիկ։
Ասա՛ ինձ. ո՞վ է արտադիր
Կամիմ գիտել այսոցիկ։—

Բերան և քիմք և ատամունք,
Կոկորդ ստամոքս և ալիք,
Ընդ որս և այս դիպաց բերմունք,
Հեշտ մեր առնեն կենցաղիկ։—

Զի՞ք տոտ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՀԱՇԻՒ ՇԻՏԱԿ։
Եւ ՄԱ՛ՏՆ ՀԸԶՕ՛Ր ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ։
Զի՞ք ի սոսա ՄԵԾ ՆԸՊԱՏԱԿ
ՆԱԽԱԽՆԱՄՈՂ ՏԵՍԱՏՈՒԹԵԱՆ։

Ը.

Ի ծաղկատան մըտցուք ընդ քեզ։
Ի զարմանաց տեսարան։
Եւ հիացուք անդ մեծապէս,
Ցիմաստուն թէ ան ուսարան։

Անուշահոտ ծաղկանց բուրմունք,
Եւ գոյնք երանգք զանազանք,
Արհեստաւոր մատանց բերմունք,
Զե՛ն մեր մըտաց խարազանք։—

Պերճապատոյտ պըճնեալ պարտէզ
Անուշահոտ. և ընդ նոյն
Անուշութեան գան ի հանդէս
Փայլից շողշողք գոյն ըզգոյն։

Ոահան, յասմիկ և մանիշակ,
Շուշան և վարդ լուսավառ,
Տան կուսական հոտ անուշակ,
Իբր ի շընչից տուրեւառ։

Որ և՛ գըրիչ բանաստեղծին
Ե՛ւ նըկարչին տըկա՛ր են,
Եւ ի գրծելըն կասկածին,
Ցորժամ նոքօք նըկարեն։

Թ.

Իսկ ի լերանց յանմատչելեաց
Ցանմշակելեաց զի՞նչ օգուտ.—
Ասա՛ հոգի՛դ զըսքանչելեաց
Զերկնէ զերկրէ խելամուտ։



Եւ որ դիպացըս տաս դիպել,
Առնես զամեն բարեդէպ.
Տո՛ւր և զարժէս կըշռել չափել
Արեգական մեր հանդէպ։—

Լերինք հերձուածք ըստահակեալք,
Ի խոր ստորոց վերացեալ.
Որք ի խաւար կային փակեալք,
Ցառնեն ի լոյս յօրացեալ։

Ուի գագաթունս արփիափայլ,
Ի ձիւնապատ մակս ճերմակս,
Շըրջապատին ի յայլ և այլ
Հասակ բըլրոց յերամակս։

Զոյս բըռնութիւն երկրագընդի
Հրեղէն ծովուն երկրաշարժ,
Հանէ. աշխարհըս դըղըրդի.
Պակնու ձայնին այնմ անվարժ.

Այս պատառուածք երկրաբանի
Լինին մատեանք առաջի.
Որով խաւարըն խափանի.
Եւ գիտութիւն յար աճի։

Որով քննեն զննեն զերկիր,
Ըզխաւս քարանց մետաղից.
Զերկաթ զարծաթ ըզքար ըզկիր.
Զնիւթս ըզբազից պատաղից.

Եւ տրտաղրեն զըլինձ, ոսկի,
Սնուցս և իւղ հանգային.
Ըզլեռս մարդկան ազգի ազգի,
Ոյց չէր մինք ժամ ամկային.

Լերինք և բլուրք և պատառուածք,
Լայնեն զերես աշխարհի.
Որով լայնին և արարածք.
Գործի ցամաք վիթխարի.

Լերինք փոխեն ըզտեսակն,
Ի զուարճալի երեւոյթ.
Եւ ընծայեն կենսածսան
Երջանկութիւն արեւոյդ.

Լերինք դընեն զոգն յընդհարման.
Փոխեն մաքրեն նորոգեն.
Զեթեր գայեր դընեն շարժման.
Ի հովի զով բարուքեն.



Լերինք ձրդեն զամպս ի հեռուստ,
Թանալ զերկիր դաշտավայր.
Ի ծնուցանել ուտեստ հագուստ
Ցերկրէ մերմէ մըշտամայր.

Լերինք զանտառս բուսուցանեն,
Եւ տան ճըմրան կըրակ հեշտ.
Նաև զատաղձս հատուցանեն,
Ի պէտս մարդկան անհրաժեշտ.

Որ ձիւն անձրեւ խոնաւութիւն
Ի ստուերս յարմատս պահպանեն,
Ուի տընտեսող խնայողութիւն
Տակաւ ներքուստ դուրս ծորեն.

Եւ ի յուսից և ի կըրծոց
Մինչ ի ստորոտս ըզրաձեալ
Դալար գեղօք, արարածոց
Բաշխեն զբարիս մըտաձեալ.

Եւ մըշտահոս միօրինակ
Գետք և վըտակք գոյանան.
Ի դիւրս երկրի մարդարընակ,
Ի գեղս քաղաքս խոյանան.

Եւ տան պասքո առատ յաղուրդ,
Ո՛չ մարդկութեան միայնո,
Այլ և զկաղդոյրն ընծայեն ցուրտ
Ջուրց՝ կենդանւոյ անասնոյ,

Եւ զայդեստան և ըզպարտէզ,
Եւ զանդաստան պըտղաբեր,
Ուռդանեն, զորս դու կերտես.
Արդեանց սպասեալ անհամբեր։

Հա՛ այսպիսւոյ մեծ օրհնութեանց
Լինին լերինք գանձարանք,
Եւ ըստ վըսեմ մեծ լեռնութեանց
Իւրեանց հոսին գան ծորանք։

* *

Լերինք պարիսպ պատուար լինին
Ըզբընակիչօք աշխարհաց.
Եւ յարձակմանց ըզդիմ ունին
Բըռնաւորաց օտարաց։

Լերինք կոթողք են և արձանք
Իւրաքանչիւր ազգութեանց.
Զոյս կուլ եռուն ազգակործանք,
Արհամարհողք խկութեանց։



Լերինք ըզծայն Որոտողին
Ցըզեն ի վայր դաշտավայր,
Կանգնեալ պաշտպան բընկաց հողին,
Իւրաքանչիւրք ժէն մի հայր։

Զայն ի թրախոյս որդւոց իւրեանց,
Ի սպառնալիս օտարաց.
Տան, որ թագեն զերկիր յարեանց,
Ըզտանուտեարս վրտարած։

Իւրաքանչիւրք երկրի բընկաց
Նահապետաց կոչմանէ,
Փոխանորդեն տան քաղաքաց
Բողոք գիրաց չեղմանէ։

Եւ ի՛մ Մասիս մեծ բարձրադիր
Ի հայրենին ի՛մ ի հոգ,
Ի յԱյրարատ Ատուածընտիր
Սուրբ նահանգին հընչէ փող։

Ու Առաջնահան ի՛մ եռատայր
Խորհրդաւոր աշտարակ,
Բիւրեղատիպ հեղու ի վայր
Յաչաց Պըլիսոյ յԱւերակ։

* *

Նա լուսաւոր կըրել գագաթ
Լերինք դաս տան մարդկութեան,
Որոց ցանկան լինել ազատ,
Եւ հասանել փըրկութեան։

Զի և ըզգլուխս ունին միշտ վեր,
Ի խուսափել խաւարէն.
Որո՛վ բըռունք խաւարասէր
Զերկիր գողջոյն աւերեն։

Եւ ճառագայթք նախացոլակ
Նախ զայնոսի՛կ ողջունեն.
Մա՛ի խաւար արկեալ սըլաք,
Ի դաչտս ի ձորս ի ջանեն։

Որ զկուրութիւն ջընջեալ յերկրէն,
Տան տեսանել ստեղծուածոց
Ա՛ զլուսասէր հոգիս բերկրեն.
Զոյս ծածկէր մութ մեծածոց։—

Ժ.

Ո՛վ արշաւանք լուսոտ տարեաց,
Աստուածազիս թափանցող.
Որ գան անձայն, այլ վիմահերձ
Աչօք խանձո՛ղ նախանձող։



Որ պատառեն ըզկարծրութիւն,
Ըզսառնութիւն սեւեռից,
Երկրի աչաց առ բարձրութիւն
Պաղ նայուածոց բեւեռից։

Որ և՛ ի ծով և՛ ի ցամաք
Միահաղոյն ժամանեն.
Գործեն երկրին թէև ի մակ,
Յեղափոխեն հիմանէն։

Ու՝նդ օդային անծայր ծովուն
Լուսաշանթիրին շըփմանէ,
Գա ջերութիւն. կեանք արեւուն
Գործէ՝ մեծէ հրամանէ։

Որ ջեռուցեալ, շոգի գործեալ,
Մեծաքանակ հանէ ջուր.
Եւ ընդ ըսփիռըս տարածեալ
Երկրի, ստեղծէ աղբիւր բիւր։

Այս սըրարշաւ լուսոտ տարեաց
Ամեհամուղ թափանցում,
Ընդ թանցրութեան դըժուարահերձ
Օդոյն, սաստիկ տա ցընցում։

Սովաւ ի գո գա ջեր, որ չէր
Նախ քան զչարժումն էութեանց.
Յորում բնութիւն ի պաղ հանդչէր,
Եւ ի խաւար անթափանց։

Եւ որ ներքո, և որ վերեւ,
Լընու կենօք զամեն, ուր
Շարժի, չարժէ որ ինչ զիւրեւ.
Եռա խաղա հոսէ հուր։

Ա՛սա է՝ զի կեանք ըսկիզբ առնու.
Այլ և պէտք է Բաւականն.
Այն որ անձամբ իւրով լընու
Ըզվայրն ամբաւ տեւական։

Զի Նա՛ գիտէ իմաստութեամբ
Մեծաւ յարել յարմարել,
Հանճարաւոր գործել մատամբ.
Համեմատել համարել։

Զի մի՛ երբէք աննըպատակ
Ինչ, գտանիցի չեւ ի չեւ.
Եւ մի՛ կուտակ գուցէ պիտակ
Անհամեմատ և տըձեւ։



Ունդք, կուտք, ձուք, սերք, սերմք,
սերմանիք
Ջերին, չարժին յարդանդին,
Ուր ի նմանեաց գան նըմանիք.
Ուր տիպք սերին սերընդին։

Ամենայնիւ կան պատրաստի
Հրամայողին հրամանին.
Ի խըլըրտիլ անտի աստի,
Կենաց չարժիչ պայմանին։

Որ «օ՛ն» ասէ, Նա՛ և դասէ,
Դասաւորէ զամենայն։
Ճեղքէ զկեղեւս զաչքս լուսէ,
Լուսաւորէ զամենայն։

Բանա՛ զբերանս, ծըծել ըզծուծս,
Պատճաւ բնութեան մաղական.
Եւ պարարէ զզաղիր գըծուծս,
Ի խողովակս վազական։

Իւրաքանչիւր արքայութիւնք
Տընկոց բուսոց կենդանեաց.
Փըցուն փըտուն քայքայութիւնք
Գան կայկային հընդենեաց։

Ցանեղաչէն հիւղէն ամենք,
Պոռթկան դուրս գան երեւին.
Մըծեն ծըլին ծաղկին ամենք,
Տէրամբ. ձեռամբ արեւին։

Իւրաքանչիւր հատիկ լուսո,
Մէն մէկ ձեռք են Աստուծո.
Որ է ճըշգրիտ խարիսխ յուսո,
Իմաստասէր ստեղծուածո։

ԺԱ.

Նայեա՛ գատման փոքրոգութեան
Անաստուածին գիտնական.
Որ ընծայէ Անոքութեան
Զարդիւնս ա՛յսչափ գործնական։

Որ տա, խորհուրդ, կարողութիւն,
Ճարտարութիւն և հաշուել.
Էից բնաւից տիրողութիւն.
Ոչէութե՛ան առաւել։

Լի են թէպէտ երկինք երկիր
Արդեամբ մեծի խորհրդոյ
Բայց չիք գործող ոք մշտակիր
Հոս կապկասեռ մէկ մարդոյ։



Եւ թէպէտ գիրք զոր ինք գըրեաց,
Զեղեւ առանց իւր անձին.
Սակայն արդիւնք այնքան բարեաց
Եղեն ինքեամբ առանձին։

Որ զինքն և զայլս կամի խարել
Թէ Զէն գործէ. և գիտէ
Համեմատել, ձեւել, չափել,
Մինչ նա քան զինքն անմիտ է։

Թէ Զէութիւն մեծ, խոյանա
Ըստեղծանել զամենայն։
Եւ զինչ և պէտք որ գոյանա,
Գա Զէութիւն հոգա զայն։

Թէ Զէն Բնութիւն որ զինքենէն
Զէ՛ գիտակից լինել ինչ.
Անգոյութեան ի յանկենէն
Նըստեալ գիտէ զամեն ինչ։

Թէ օրինօք անխախտելեօք
Հըսկէ բնաւից յաջըս նինջ,
Գործէ բըռամբք անյաղթելեօք,
Շինել գիտէ զամեն ինչ։

Թէ «պէտք չինեն պէտք ըստեղծեն,
Պէտք գոյութիւն տան իրաց։
Ըստ պիտոյից պէտք արարադրեն
Նորոգութիւն աւերաց»։

Ուշիմ առ այս խընդրեմ դատող
Արդարատէր դատաւոր։
Ո՞վ, գի՞նչ է պէտք միջամտող։
Ա՞նձն է խոհուն, մըտաւոր։

Պէ՞տքն ըզգա պէտք։ և է՞ կարող
Տա՛լ յագուրդ այդ ըզգայման։—
Զըմիըռնեցի։ ո՞վ է գործող
Մատակարար պահանջման։

Ծարաւութի՞ւնն է հոգացող,
Կամ եթէ ջուրն անրզգա։
Թէ ծարաւի անձն ըզգացող։
Որ անձկանօք աղրեր գա։

Ծարա՞ն ի՞նչ է ջուր գըտանող
Թէ ծարաւին մարդ խորհող։
Ո՞վ է հորէն վեր ջուր հանող։
Եւ կամ աղրեր խոնարհող։



Այսու խելօք է որ ծաղրեն,
Զի գերբնական ընդունիմք,
Գործըս հրաշից, որ ի Հպորէն
Լինել անշուշտ գաւանիմք։

Վասն և որո զայս մոլեռանդ
Սնապաշտութիւն համարին։
Մինչ քան զամեն մոլեալ աղանդ,
Ինքեա՛նք անոտեօք յիմարին։

Զոր օրինակ։ ո՞րն է բնական։—
Գործք ընդ գործող հաւատալ
Աւ ի լինել մարդ բանական,
Եթէ զնանոնաչն դիպաց տալ։—

Ենթադրեսցուք թէ ոք ասէր։
«Տըպագրութիւնք ամենայն
Որ եղանին, իմաստասէր
Դիպաց արդիւնք են միայն։

«Եւ թէպէտ դէպք ոչ սէր գիտեն,
Եւ ոչ խորհիլ գիմաստից,
Զամենալաւ սակայն կերտեն։
Դուրս տան զխորհուրդս ըզգաստից։

«Ի յընցմանէն երկրաշարժին
Գիրք ըզմիմանս գըտանեն.
Անգըրաշար, սակայն չարին,
Ուի կաղապարս մըտանեն։

«Եւ ի դիպաց առեալ մեկան,
Թըղթոց վերա անկանին.
Ատտի անտի...ֆալան ֆիլան,
Կազմին մատեանք եղանին»։

Այս է մըտաց ընդգըրկելի.
Այս է հաւատ ուղղափառ.
Թէ ծաղրելի ընկըրկելի
Անմըտութեան գաղաբար։—

Տի՛ր օն ապո՛ւշ դի՛ր օն ի բաց
Դատումդ թափած թափթըփած.
Զախող մըտօք, ցնորիւք դիպաց
Քեզ ինք խաբած խաբխըբած։

Հրաժարելով արդ հրաժարիմք
Ի դիւացունց յուղեղից.
Դարձեալ էին սիրահարիմք
Եւ Տեառն Ուխտի աղեղից։



ԺԲ.

Ի վե՛ր ի վե՛ր ամբարձ ըզձլուխ
Քո բանաւոր և տեսող.
Դիտել զարեգըն լուսաբուղխ,
Առ ամեն կոյս երեսող։

Հազար և հի՛նգ հարիւր հազար
Անգամ խոշոր քան զերկիր
Լոյծ այս բոլոր և մըշտավառ
Անչէջ փարոս լուսակիր.

Զերկոտասան մեծամեծ գունտս
Առեալ զիւրեւ թաւալէ.
Բազմամիլիոն մըղոն անդունդս,
Լըցեալ արեւ ծաւալէ։

Ի տարբեր գիծս հեռագնացիկ,
Անայլայլիկ դըրութեամբ.
Կապեալ զնոսա կեդրոնաձիգ
Մեծաւ իւրով զօրութեամբ։

Ո՛չ տա վայրկեան մի դադարել,
Այլ միշտ վազել ժըրաջան.
Իւրաքանչիւրց տա կատարել
Տարեդարձիցն ըզչըրջան։

Որ բիւրուց բիւր անգամ քան զինք
Մեծամարմին զարեգաւ,
Յորմէ ծնաւ ինք և մեծագինք,
Շարժի հլութեան աղաղաւ։

Եւ կէտ առ կէտ ըստ սահմանեալ
Ժամադրութեանց ժամանել,
Զըգեալ վանեալ հանեալ մանեալ
Գընա տանի՛ 'վայր անել։—

Յո՞ գնաս Արե՛գ· յայդմ անէ սին
Վայր անսահման ու չտապես,
Լուսաւորեալ զամենեսին
Միահաղոյն մրչտապէս։

Թէ լայնութիւն ա՛յդչափ անհուն
Ի շնորհս քո չքիկ երևին
Պայծառանա· է՞ր բանիբուն
Մբթաղնի միաք գոռոզին։

Է՛ր ոչ և զանդս խելապատակս
Գիտնոց չբիրես չոչափես.
Ընդէ՞ր ցանուս 'ւիբր խմաստակս
Մերժես, ի բաց թոթափես։



Արդեօք և զայդ իմաստութիւն
Ըստեղծողին պահանջէ·
Որ ըվասնարհ ըզդաստութիւն
Սիրեալ զհըպարտս նահանջէ։

Այսպէ՞ս ծածկին մեծ գիտութիւնք
Առ ի գիտնոց յիմաստնոց·
Ընդ որ Փրկիչն ետ գոհութիւն·
Ուռաջնութիւն ետ յետնոց։

Որ ասաց «Հա՛յր զայս ի գիտնոց
Եւ յիմաստնոց ծածկեցեր·
Եւ շնորհեցեր փոքունց յետնոց,
Եւ տըղայոց յայտնեցեր»։

Որ երկնահերձ Աստուածատես
Աչօք յերկինս յառեցաւ,
Գոչելով· «Հա՛յր այո՛ ա՛յսպէս
Քեզ հաճելի թուեցաւ»։

Որ երանեաց և զայնոսիկ,
Որոց սըրտիւք սուրբ իցեն·
«Զի սուրբ ասաց սիրտն է գործիք,
Որով զԱստուած դիտեսցեն»։

Որ ո՛չ այսու գա դիտակաւ,
Զ՝կարէ զԱստուած տեսանել.
Ոչինչ օգտէ սըրտիւ սիգաւ
Ուսում բազում ուսանել։—

Արդ դուք ռամիկք կամ գիտնականք,
Զինչ և որ եք, յո՛ւշ ձեզ այս,
Զի ե՞ն սխալանք ծանրատուգանք,
Ի բազմաբիւր պարագայս։

Եւ են բազում իրք գիտելիք,
Զոյս եթէ ո՛չ գիտիցեք,
Ունիք և հերքք փեսելիք։
Եւ օր, յորում հեծիցեք։

ՎԵՐՋ ԴՐՈՒԱԴԻ ՍՈՒԱՋՆՈ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ում ՍՍՌ
Ա. Մեսրոպի անվան
Им. А. Месропа



## ՎՐԻՊԱԿ

| | | | | սխալ | ուղիղ |
|---|---|---|---|---|---|
| էջ | 12 | տող | 11 | հաւադընդի | հաւադընդի |
| » | 22 | » | 3 | ըղհաւուց | ըզհաւուց |
| » | 24 | » | 3 | Աստուածութեան | Աստուածութեան |
| » | 25 | » | 7 | ոոխակ | սոխակ |
| » | 28 | » | 14 | Գամամամոնքն | Գամամամանքն |
| » | 33 | » | 17 | թամոն | դամոն |
| » | 34 | » | 14 | տաքտեղ | տաքդեղ |
| » | 38 | » | 8 | մինք | միտք |
| » | 40 | » | 11 | լեռնութեանց | լեռնութեանց |
| » | 41 | » | 20 | Պլիսատ | Պլիսատ |
| » | 48 | » | 3 | արաադրեն | արտադրեն |

204.
Ա.Դ
0

18044

Այս գրքոյկէն սատանալ ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին

P. H. Vartooguian,
112 Madison St.
NEW YORK,
U. S. America.

Գին Ա. · Դրուագի, 15 սենտ.

Ա.Դ

2013